42. ՏԱՏ ՈՒ ՊԵՏԱՏ

Մեկ նախրորթ մը կեր, գնաց մո ռես ասաց. - Նախրթութեն տաս ծի, ես ըմեն օր շախվեմ:

- Այ տղա, - ասաց, - նախրթութեն տվեր եմ քե, գնա, քեռ հախ առնես, քեռ խացն էլ ժողվես. տանը գլոխ մեկ ղիտր* ցորեն քե հախ:

Եռսուն տարի էլավ նախրորթ: Մեկ օր, ասեմ մայիս ամիս, դավար պլավավ-ցրվավ, մոզեր թալին ինե-թըխ ղավար, պեզրավ, նստավ լացեց, ասաց. - Տեր Աստված, յան էմ խոքին առ, յան ղսմաթ մը տուր ծիկ, խերիք ի ես էսա չարչարանք քյաշեմ:

Դորիս ղավար հեռըցավ մե մեկուց, գնաց ղավրի իտև:

Դորիս Աստված կենճխանա բացեց, տեսավ էդա նախրորթ ասաց. - Ես նախրորթ եմ, չեմ կանա մընակ ուտի, համ, ռեսին ասեմ, խտրացով ուտենք:

Ռեսին ասաց:

Ռեսը չխավատաց:

Նախրորթ ասաց. - Վալա, պիլա, բիլա, ես քե չեմ խափի, արև մտի, էհանք, բիրենք:

Էլան ռես, նախրորթ, ռեսի մշակ-ղուլ գնացին վըր կենճխանի բերնին, տըսան:

Նախրորթ մտավ ինե, մաղով տվեց ռեսին, ռես տվեց ղուլին, ղուլ իրեք դեվա եխ արավ, բեռներ լցրեց:

---

* Ղիտր (լիտր) - հատիկաբուլսերի կշռաչափ (ծ.բ.):

Հետին մազին ռես ասաց դուլին. - Գնա, նախրորթի վիզ զարկենք տանենք, ուտենք:

Դուլ ասաց. - Մեղք ի, Աստված տվեց ինոր, էն էլ բիրեց, տվեց քե:

Ռես կասի. - Ես քյո աղեն եմ, կասեմ զա՛րկ, զա՛րկ, իշ կասեմ, էմ խոսքով արա:

Դուլ էկավ, նախրորթին ասաց. - Քեռ վիզ կտռեմ:

Ասաց. - Տա՛տ պետատ, ես իշ եմ արե, կենճխանեն տվեր եմ քե, էմ վիզ մի՛ կտռի:

Ասաց. - Չէ, ես սկուն չեմ անի, քեռ վիզ տը կտռիմ:

Էդա նախրորթ իրեք խատ անգին քար էդա կենճխանից վիրուցած էր. ասաց. - Դո՛ւլ, դյու ու քեռ Աստված, էմ գլոխ պտի զանիս, առ էդա իրեք քարեր, տար տուր էմ կնկյան, էմ կնիկ էրկու խոգով ի, թի որ ընծիկ լաճմ կըլնի, անուն դնի Տատ պետատ, թի որ աղջիկ կըլնի, հինք գիտի:

Էդա նախրորթի վիզ կտռին մըչ կենճխանին:

Էդա կենճխանեն իշ կեր, չկեր, առան էկան:

Խըլուսուն նախրորթի կնիկ գնաց մո ռես ասաց. - Դո՛ր ի էմ իրիկ, դո՞ր օղորկրիս, գնացե:

Ասաց. - Նախրորթ ծուռ մարդմ էր, ով գիտի՝ դոր ի գնացեր, գնացիր ի ուր խոր գյոռ:

- Մենք ըմենով տը մեռնինք սոված, հեվարին խաց չի բիրի:

Էն մնաց ուր հալին, ինոնք բիրին կենճխանեն կերան:

Մնաց, հայամ մը վրեն ընցավ, դուլ ծեռ տվեց ճեպ, էն իրեք անգին քար մըջ ճեպին տըսավ, էդա քարեր գեաղտըկութենով բիրեց, տվեց նախրորթի կնկյան, էն խսեն ասաց:

Ժամանակ մը վրեն գնաց: Աստված լաճ մը տվեց նախրորթի կնկյան. դրկեցներ էլան ասին. - Անտեր տղա ի, խայ քրիստոնյա ի, չըլնի մեռնի անկնունք:

Էլան տղեն տարին ժամտուն կնունք:

Տերտեր տատմոր ասաց. - Ի՞շ անուն դնինք վրեն:

Տատմեր ասաց. - Մոր կանչեք՝ գյա, անուն դնի:

Մեր կանչին բիրին, էկավ:

Տերտեր խարցնեց. - Իսոր անուն ի՞շ տը դնինք:

Ասաց. - Տերտեր, որ թի ծի կը խարցնես, անուն դիր Տատ պետատ:

- Այ մամա՛, վի՞ր անուն կա Տատ պետատ մըչ խայ քրիստոնին, օր քյո տղի անուն դնեմ Տատ պետատ:

- Չէ՛, - ասաց, - ուր խոր վասիաթն ի, խոր վասիաթ ես չըմ կուրիսի:

Տղեն կնքեցին. Ֆանուն դրին Տատ պետատ, բիրին տուն:

Տղեն օր ավուր ջոջացավ . ֆահմավոր իլավ:

Մեկ օր մոր ասաց. - էմ խոր սանահաթ իշ ի, բանցուցեմ:

Մեր ասաց. - Քյո խոր սանահաթ նալպնտութեն ի:

- Չի առ, տար գնա մո նալպանտ:

Տղի ձեռ բռնեց, տարավ գնաց մո նալպանտ:

- Նալպնտչի՛, էմ տղեն բիրեր եմ նալպնտութեն ուսուցես:

Ասաց. - Շատ լավ կասես. թո կայնի տագ, ընձի սմթրաշ բիրի, ձիու ոտ բռնի, գլոխ բռնի, ես ուսուցեմ:

- Լաճն մեկ օր մնաց դա, իլավ, փախավ, գնաց մո մեր, - ասաց:

- Տատ պետա՛տ, դյու ընչի՞ էկար:

Ասաց. - Վալա՛, ձին մեկ օր լանկի զարկի մըչ էմ բերնին: Ես չեմ կանա նալպնտութեն անի:

Ասաց. - Քեռ խոր գյոռ, գնա՛, մըչ ճժերաց խաղա:

- Չէ, - ասաց, - ես էմ խոր սանահաթ քինե կուզեմ:

Ասաց. - Քեռ խոր սանահաթ խայաթութեն ի:

- էմ ձեռ բռնե, տար մո խայաթճին:

Տարավ մո խայաթճին, ասաց. - Եմ տղեն ուսուցես խայաթութեն, մենք հըմենով շախվենք:

Ասաց. - Թո մնա մո ձիկ, թել քեշե ասեղ, շոր տա էմ ձեռ, ես ուսուցեմ:

Մեկ օր մնաց դա, փախավ էկավ:

Մեր ասաց. - Տատ պետատ, ընչի՞ էկար:

Ասաց. - Էս չեմ կանա խայաթութեն անի, օր մը ասեղ մտնի էմ ձեռ, յարալու անի, մտնի էմ աչք, քոռ անի:

Ասաց. - Դյու սանահաթ չսորվար, գնա մըչ ճժերաց կան արի պա-ռապ-սարապ:

Ասաց. - էմ խոր սանահաթ ի՞նչ ի, ձի դիր էմ խոր սանահաթին:

Ասաց. - Քեռ խեր խյուս էր, խուսութեն կաներ:

- էմ ձեռ բռնի, տար մո ուստեն*, թը ընձի անի ուստա, ես ուսնեմ:

Ձեռ բռնեց, տարավ գնաց մո ուստեն, ասաց. - էմ տղեն ուսուցես ուստութեն, կըլնի ուստա, մենք ըմենով կը շախվենք:

Ասաց. - Թը մնա ըս տե, փետ տա, ուրագ տա, ես ասեմ ուրագ ծընա դիր, տաշի, ուսի քե խըմակ:

Մնաց դա էրկու օր, փախավ, գնաց:

---

* Այստեղ՝ գուլթանի սարք շինող (ծ.բ.):

Գնաց մո մեր, ասաց. - Տատ պետատ, ընչի՞ փախար:

- Վալա՛, - ասաց, - ես չեմ կանա էն ուստուքեն անի, ուրագ մեկ օր դպնի, էմ ոտ կտռի. ես էն սանահաք չեմ անի:

- Որ դյու չես անի, հա գնա՛, կան արի ես իշ սանահաքի վրեն կը դնեմ, չես անի:

- Էմ խոր սանահաք քենե իլահի կուզեմ:

Ասաց. - Քյո խոր սանահա՞ք:

Ասաց. - Խա՛:

Ասաց. - Քեռ խեր տարին տասներկու ամիս նախրճի էր:

- Ահա՛ն, մերիկ, ես էմ խոր սանահաքին իտև կան գիգի. էմ խոր սանահաք գտա, էմ, ձեռ բռնի, տար մո ռես, ընձի անի նախրճի, ես որ չեմ կանա նախրճի էղնի՝ ընձի անի հորքարած:

Ձեռ բռնեց տարավ մո ռես, ասաց. - Էմ տղեն անես որքկարած, էմ լաճու խեր գնաց կուրիսավ, էմ լաճ անես որքկարած, որ մենք ըմենով շախվենք:

- Այ տղա՛, - ասաց, - դյու չըմքի մանտր ես, կանա՞ս որքկարածուքեն անես:

- Նախրճուքեն չէ, խըմա որքկարածուքեն կանամ:

- Այ որդի՛, գնա հէռջև որքկնեկաց, ես քե կտամ հըմեկ որքկնեկաց մե մեկ ղիտր ցորեն, կիրակնեց կիրակի քեռ խաց ժողվե, կե:

Չում աշուն իլավ որքկարած, աշուն առեց խարիր ղիտր ցորեն, հիսուն ղիտր ծախեց, տվեց խարիր չարխի, խարիր չարխին, ասեմ, տվեց ուր խըմա շորի, իլավ մոր ասաց. - Էս մեկ տարի արեր եմ որքկարածուքեն, խարիր ղիտր ցորեն եմ առեր, ես ծախեր եմ հիսուն ղիտր, տվեր եմ, չարխի եմ առեր, ես էմ խոր եռսուն տարվա հախ քինե դավի կանեմ, հո՞ւր ի, չէրևա, ընձի շանց տու, ընչի շանց չես իտա:

Ասաց. - Քեռ խեր ծուռ մարդ մ'էր, կը փըճցուցեր, չըմ գիտի հուր ի:

Մոր վրեն զորեց, ասաց. - Դյու էմ խոր հախ պտի բիրես, ընձի շանց տաս, չէ՛, քե կը սպանեմ:

Մեր էլավ վեր, ուր տղուն մեկ անգին քար տվեց, ասաց. - Որդի՛, էսա ի քյո խոր հախ:

Ասաց. - Է՞ն է, ես ղապուլ արի, տա՛ր գնա մո զարկյար, խուրտի, բեր, ընձիկ պետք է:

Տարավ գնաց մո զարկյար, զարկյար ասաց. - Այ մամա՛, ես իսոր ղեյմեթ չըմ գիտի:

- Դյու խալալ մարդ ես, իշ կը տաս, տուր:

էլավ, մե մեշոք ոսկի տվեց, կնիկ առեց, էկավ տուն, լաճն՝ Տատ պետատ, հավարին էկավ. - Այ մեր, - ասաց, - դյու տարար, գնացիր, ի՞շ տվեց քե:

- Մե մեշոք ոսկի, - ասաց:

- Մերի՛կ, գնա՛ մո թաքավոր, մե մե շենլըկի տեղ տա, ըստեղ օտարութեն ի, տեղ չկա, ընձի կը թքուցեն, կը մըրեն, կը մլեն դյուս:

Մեր գնաց մո թաքավոր, տեղ ուզեց. թաքավոր գրեց. տվեց, որ արտի տեր դավի չանի:

Հեվարին տղեն էկավ, խարցնեց, մեր ասաց. - Գնացի մո թաքավոր, գրեց, տվեց:

Տատ պետատ ասաց. - Խըլուսուն գնա, ասա թաքավորին, որ ուր ուստեն տը գեա, ուր սարի պես շինի:

Կնիկ գնաց, ասաց. ինոր վրեն ծծղաց թաքավոր, սինոդքեր ծծղացին, վոզիր ծծղաց, ասին. - Ա՛յ մեր, թաքավորի սարեն, թաքավորին ի լայեղ, գնա՛, քե խըմա շինի:

Ասաց. - Չե իշ կա, ուստեն ծի շանք տվեք:

Վոզիր ասաց. - Թաքավո՛ր ապրած, խեղճ ի, գիր մի տուր ծեռ, էհա մե սկունմ 'էլ ինոնք ծծղան վրեն, թի գյա, մնա, մըչ ուր հալին:

Տարան, գնաց մո ուստեն. հա էսա փողանն ի, հա նահան, նահան չէ, նահան դյուռ չէ, էն մեկել, գնաց, գնտավ, թուղթ տվեց ինե:

Ծծղացին վրեն, արին թըռանա. - Գնա՛, քե հուրիշ ուստա գնտի, - ասին:

- Դյու ծի փարեն իշկացեք, թաքավոր ծե տվե մեկ ոսկի, դյու առեք էրկու ոսկի, ծի ի՞շ կա:

Էնա մեկ ուստեն ասաց. - Աղո՛րթ կասի, մեր փարեն տա, էհանք:

Էլան ընկյան իտև կնկյան, գնացին:

Գնացին, տեղ էրկենք, լենք չափին, թաքավորի սարեն ի՛շ չեշիտ էր, շինին:

Տատ պետատ հեվարին էկավ. - Ա՛յ մերիկ, - ասաց, - ի՞շ արիր:

- Բիրի, չափած ի, որ առավտուն շինին:

Լաճն բանի չխառվիր, որթկարած ի, կեհա ուր բանին, իշ ընի, մերն ի:

Շենլըկներ չում կես շինին, փարեն խըլըսավ:

Հեվարին լաճն էկավ, մերն ասաց. - Փարեն խըլըսավ:

Ասաց. - Մերի՛կ, էն էմ խոր մեկ տարվան հախն էր, ապա մեկել էռսուն տարվան հա՞խ:

- Չկա, քեռ խեր մեկ ծուռ մարդ էր, կուտեր, ըռաղի, թութունի կը փըճըցուցեր:

Լաճ ախ տվեց. - Յան տը բիրիս, յան քե կը սպաննեմ:

Գնաց մեկ անգին քար բիրեց, տվեց լաճուն. - էսա ի, էլ չկա:

Ասաց. - Տար մո զարկյար՝ ըսկուն խուրտի, շինի:

Մեր գնաց, խուրտեց, մեկ մեշոք ոսկի էլ բիրեց. տարավ, գնաց էդա ոսկիքտերով ուր սարեն շինեց:

Շինեց. ինոր դյուռ, սվաղ, էրդիքներ մնաց:

Տատ պետատ ասաց. - Մերի՛կ, էսա էմ խոր էրկու տարվան հախ, դո՞ր ի էռսուն տարվան հախ, յան կը բիրես, յան քե կսպաննեմ:

Չարեն մոր կտռեց, գնաց էն մեկել քարն էլ բիրեց:

Տարավ խուրտեց, էմել մեշոք ոսկի բիրեց. շենլըկ շինեց, թմըմեց: Դորիս գնաց մեկ ծեռ շոր ուրին, մեկ ծեռք էլ թաքավորական շոր Տատ պետատին առեց:

Տատ պետատ թաք մը դրեց ուր գլոխ, գնաց, նստավ նոր շինած սարի մեջ, էլավ թաքավոր:

Հիրեկնեց կը գյա, կը նստի թաքավոր, առավոտն է կըլի, հորթիկներ կը տանի:

Հիրիկնեց, որ կը նստի թաքավոր, կը դանչի դատիմի թաքավորին մարդիկ, կասի. - Որ թաքավորի մոտեն կըլեք, քիշերնեց տուն կէհաք քնելու, եկեք, նստեք էմ մոտ, խոսանք, ծե կը շախեմ:

Դորիս էն մարդքեր, կը գեն, կը խոսան, կէհեն:

Մեկ օր էդա Տատ պետատ նստավ ուր թախտ, նոր շորեր խաքուկ, թաքավորական թաք գլոխ դրուկ:

էսա թաքավոր էդա թաքավորի սինոդքերաց ասաց. - էսօր ծեր թաքավորի դիվան, ի՞շ կեր, իշ կը խոսան:

- Վալա՛, - ասաց էն մեկ, - էսօր մե թաքավոր մեկ շարաթմ արաց, ամա չկարաց աղեկ շարաթ էներ:

էն թո մնա գա, թաքավոր հինք ու ուր վազիր դավրիշի դըլլըխ խագյան, էլան թավտիր, ժողովուրդի մեջ կան էկան, էկան տսան գեղ հըմեն քներ ին, էդա Տատ պետատ հոդեն ճրագ կը վառի, ասին՝ նահանք, ի՞շ ի:

Թաքավոր իշկաց, ասաց. - Վոզի՛ր, քընի՞ թաքավոր կա էս երկիր:

Վոզիր զըվրավ ասաց. - Թաքավո՛ր ապրած, մեկ թաքավոր ի, դյու իս, էլ ո՞վ կա:

Ասաց. - Իշկանք, էն ի՞շ թաքավոր ի:

էլան, գնացին էդա հորթարած թաքավորի հօդեն. բարև տվին, մե մուք տեղ նստան:

Խարցնեց Տատ պետատ թաքավորի սինոդքերաց:

(Թաքավոր ու վոզիր թավտիր նստած, կը լսնան):

- էսօր ձեր թաքավորի դիվան ի՞շ կեր, թալել, թողնել, զանել, բռնել սպանել:

էն մեկն ասաց. - էս օր մեր թաքավոր մեկ շարաթ արեց, ամա չկարաց աղեկ շարաթ աներ:

Ասաց. - Ի՞շ շարաթ էր:

- ժամանակ մը պազրկյան մը զինք պեկ բիրեց, հեող իսկեց, գնաց Ստամբոլ, ուք տարվան զախիրե դրեց ուր օղուլուշախի կշտին, զինք գնաց: Գնաց, տսվերկու տարի, նոր իկավ: Մեկ պազրկյան էլ Ատամբոլա զըվըրավ, էկավ չում կես ճամբեն. էն մեկել պազրկյան գնաց. դեմ առեց ինոր, խարցնեց էն հետին հիռջինին. «Դյու քընի՞ տարվա զախիրա դրիր խը քյո կնկյան կշտին»: Ասաց. «Ուք տարվա»: Ասաց. «Ես ուք տարվա դրի, չուր տսվերկու տարվա նոր էկա հիտ»: Հիտին ասաց. «Վալա, ես ուք գրեր իմ. պալի կը վախենամ քիչ բան ի, տըսա՞ր օր տսվերկու տարի չէկա. առ էսա իրեք անգին քար, տանես տաս իմ օղուլուշախի ձեռ, թո մխսի»: էն հիտին գնաց Ատամբոլ, էն հառջին էկավ ուր տուն: Բիրեց էն քարեր կերավ, չիտու կնկյան: Մնաց. հայյամ մը վրեն ընցավ, էն էլ դարձավ: էկավ, տեհավ ի՞շ, կնիկ ուր հող ծախեր էր, ասաց. «Կնի՛կ, չէ իրեք անգին քար տվեր իմ, էնա մարդ բիրե, տվե քե, դյու տուն-տեղ ինչի՞ ես ծախե»: Ասաց. «Չէ, չտվե ձիկ»: Քյար բիրող գիտցավ տեր կը գյա դավի կանի, էլավ մեկ իրեք շահետմ՝ ճարեց, ուրանք խոսքեր արին մեկ. «էսա մարդ քյարեր բիրած՝ տված ի կնկյան. կնիկ կերած՝ փըճըցուցած ի»: էկան կայնան թաքավորի դիմաց: Մարդ ասաց մեկելին.«Դյու ինչի՞ չես տվեր քարեր էմ կնկյան»: Ասաց. «Չէ, ես տվեր եմ, էնի փըճըցուցած ի»: Շահատ բիրին, շահատքեր ասին. «Մենք Աստըծու խըմա շահատ ինք, էսա մարդ մո մեր տվեց քյարեր կնկյան, կնիկ տարած՝ փըճըցուցած ի»:

Թաքավոր ասաց. - Իրեք շահատ ըլնի, իշ ըլի կը պլավի:

Տատ պետատ կը լսնա հըմեն, իշ որ թաքավորի սինոդքեր կասին, հինք կասի. - Հայտե՛, թաքավոր չկարցավ շարաթ անե, ես պիտի անեմ, գնացեք, էն մարդկեր, էն շահատքեր բիրեք սդա:

Գնացին գիշերով էն շահատքեր էլ, էն էրկու պազրկյանքդիրն էլ բիրին էկան, ձեռ դրեցին սրտքըներ՝ կայնան:

էլան խինքն էլ կայնան Տատ պետատի իրես:

Թաքավորն ու վոզիր քունճ նստած ականճ կանին:

Ասաց Տատ պետատ. - Դյու Աստըծու խըմակ շահատ իք, որ էսա մարդ իրեք անգին քար բիրեց, տվեց կնկյան. էսա կնիկ տարի, փճըցուցի, մկա իրիկ դավի կանի:

Կասեն. - Խա, մենք Աստըծու հառեջ շահատ ինք:

Ասաց Տատ պետատ. - էդա շահատքեր տարեք, մեկ-մեկ օդա մտուցեք, իրար իրես չտսնան:

Հերքեշի մեկ-մեկ օդա տարան:

Տատ պետատ էլավ, իրեք խմորի գյունդ շինեց, մեկը մենծ, մեկը մանտր, մեկը չըզեն շատ մանտր:

Ղանչեց էն մեկ շահատ բիրեց, խարցուց մոտեն. - Այ տղա՛, ինոնք անմեղ, դյու մեղավոր, դյու շահատութեն Աստըծու խմա պտի տեք:

Ասաց. - Խա, ես Աստըծու խմա շահատ իմ. իրեք անգին քյար էսա մարդ տվեց էսա կնկյան:

Ասաց. - Դյու տեհա՞ր:

Ասաց. - Խա՛:

- Ո՞ր ամիսն էր:

- Ես չըմ գիտի, ես կարդացվո՞ր իմ:

- Աշուն էր, գարուն էր, ի՞շ վախտ էր:

Ասաց. - Գարուն էր, վիսկու ժամանակ էր, մե իրեքին վիսկին էլ մեկ տեղ էր, բիրեց տուն, մե արաց շահատ:

Տատ պետատ մենծ խմորի գյունդ շանք տվեց, էդա մարդու, ասաց. - Այ տղա՛, էդա քյար ծընեմ կեր, չկե՞ր:

Ասաց. - Պավարկե էսա քյարն էր:

- Յագճի, - ասաց Տատ պետատ, - գրի որ վիսկու գյախ իլի շահատ:

Գնացին մեկ շահատ էլ բիրին, էկան:

- Այ տղա՛, ասաց, - ինք արդար, դյու մեղավոր. Աստծու խըմա դյու շահատ ի՞ս:

Ասաց. - Խա՛, ես Աստըծու խըմա շահատ իմ, որ էսա մարդ իրեք անգին քյար տվեց էսա կնկյան... :

Ասաց. - Ի՞շ գյախ էր:

- Ես կարդացվո՞ր եմ, չըմ գիտի:

Ասաց. - Ձմե՛ռ էր, գարո՛ւն էր, աշո՛ւն էր:

Ասաց. - Կալի գյախ էր, մե կալեր մո մեմեկ էր. մենք էկանք էլանք շահատ:

Միջնեկ խմորի գյունդ շանք տվեց. - Ծնեմ կա՞ր, - ասաց:

Ասաց. - Պավարկե էսա էն քյարն ի:

- Յագճի՛, - ասաց, - գրի կալի գյախ էկած, իլած շահատ:

Հիտին շահատ բիրին. խարցում արաց:

- Այ տղա՛, դյու Աստըծու խմակ շահատութեն կանե՞ս, մըկա մարդքեր արդար, դյու մեղավոր. օղորթն ասա, դյու շահա՞տ իս, էսա մարդ իրեք անգին քյար տվե էսա կնկյան, քյո խոգյուն մեղք մի՛ անի:

Ասաց. - Խա՛, ես Աստըծու խըմա շահատ իմ:

Ի՞շ գյախ էր:

- Չըմ գիտի, ես կարդացվո՞ր եմ:

Ասաց. - Գարուն էր, աշուն էր, ամառն էր, թե՞ ծմեռ:

Ասաց. - Հիտին հունվարն էր. մենք իրեքով մե տներ կը սվաղենք, մեր ծըռներ չամրաթաթախ բիրեց, արեց մե շահատ:

- Յագճի, գրի՝ հիտին հունվարին էր:

Բիրին էդա իրեք շահատն էլ կայնըցըցին մեկ մեկի իրես:

Յագճին կարդաց, մեկ վիսկու գյախ իլե, մեկ կալի գյախ, մեկ հիտին հունվարին:

Տատ պետատ փետ առավ ձեռ, ասաց. - Մեկ մեկու խապար չէլավ, յան սաղ տ'ասեք, յան տը մորթեմ:

Ասին. - Թաքավոր, մենք շահատ չընք, մե տվեց խինգ խինգ դչ:

Տատ պետատ ասաց. - Ելեք գնացեք, թաքավոր ինչ շարաթ արե, թո կենա էն շաբաթով:

Պլավան, գնացին:

Առավտուն հորթկարած էլավ, գնաց ուր հորթկերաց դաշտ, թաքավոր էլավ ասաց. - Գնացեք, հորթկարած բերեք, չտփեք:

Գնացին, ինչխ արին, չէկավ. - Ի՞շ գյործ կա ծը ծի թաքավորին, - ասաց:

Դիրմ է՛լ օղորկեց, ասաց. - Մի՛ տփեք, պստիկ տաս տարեկան ի, շալկեք, բիրեք:

Տարան, գնացին մո թաքավոր:

- Այ տղա՛, - ասաց, - հեվարին շարաթ արեր եմ, էմ գլոխ կը ցավեր, չըմ գիտցե, պտի գյաս դյու էն շարաթ կտռես:

Ասաց. - Էրկու սահաթ քեռ թաքավորութեն տու ծիկ, դյու արե, էմ տեղ նստի, ըլեմ թաքավոր, շարաթ անեմ:

Ուր թաք դրեց հորթկարածի գլոխ, գնաց հորթկարածի տեղ նստավ, հորթկարած գնաց թախտ նստավ, շարաթ արավ:

Ղանչին էն էրկու պազրկյան բիրին, կնիկ բիրին, շահատքեր բիրին: Հեվարին ինչխ շարաթ արաց, էմել արաց:

Ինոնց խապրքեր չէլավ մեկ:

Նոր թաքավոր ասաց պազրկյանին. - Քյարեր բե, չէ քյո գլոխ կը զարկիմ:

Իրեք անգին քյար բիրեց, տվեց կնկյան:

Տատ պետատ դարձավ դըխ թաքավոր, ասաց. - Թաքավո՛ր ապրած, ես քեռ շարաթ արեցի, դյու էլ էմ շարաթ անես:

Թաքավոր գնաց նստավ ուր տեղ. - Քեռ շարաթ ի՞շ ի, - ասաց:

- Ասեմ էսա էրևանա փոսն ի. վի՞ր անունն ի Տատ պետատ որ էմ անուն դրած ի Տատ պետատ:

Իլան տերտեր բիրին, խարցուցին. - Ընչի՞ էսա մարդյու անուն դրեր էս Տատ պետատ:

Ասաց. - Վըր մե պարտք ի՝ ինչ որ խեր մեր ասի, դնենք:

Կանչին մեր բիրին, ասաց. - Ինոր խոր վասիաթ էն ի, ղուլ ձի ասաց:

Գնացին ղուլ բիրին, ղուլ ասաց. - Օղորթ ի, ռես գանչեք գյա:

Գնացին ռես ղանչին, բիրին, դյուռ շինին, ինոնց շարաթ կտռին:

- Ղո՛լլ, - ասաց թաքավոր, - որ դյու օղորթ չասես, քե պտի մորթեմ, որ ասես, էրկիր մը պտի տամ քե. գնա կեր:

Ղուլ ասաց. - Նախրորթ կենճխանա տեհավ, էկավ ռեսին ասաց. ես, ռես, նախրորթ էլանք. գնացինք վըր կենճխանի բերնին. նախրորթ մտուցինք ինե. նահան մաղով տվեց մե. մենք լցինք բեռներ. հիտին դորին ռես ասաց ձի. «Գնա՛, նախրորթի վիզ կտռի»: Ասի. «Աստված ինոր խսմաթ արե, մեղք ի»: Ասաց. «Ես կասեմ կտռի»: Գնաց որ կտռի, ասաց. «էմ վիզ մի՛ կտռի. կենճխանեն հըմեն տվիր եմ ձե»: Ասի. «Չէ, պտի կտռեմ»: էդա իրեք քյար նախրորթ տվեց ձիկ, ասաց. «Տար տուր էմ կնկյան, թի որ ձիկ լաճ իլավ, լաճու անուն դնի Տատ պետատ»: Ես զանի նախրորթի վիզ կտռի:

Ասաց թաքավոր. - Որ սկուն ի, Նախչիվան տվեր իմ քե:

Տատ պետատ ասաց. - Ես էմ խոր արընքի իտև կան գգեր:

Թաքավոր իգին իտուր, Տատ պետատ զինք իլավ, ըռեսի գլոխ զանեց, ուր խոր արունք ուր ձեռնով առեց: